

Իրիկնամուտ առնային

Ո՞վ է՝ հովին մէջ կ'երգէ սէրն աշնան, —
 Ու մարգագետնին մէջ ծիլ ու ծառեր
 Ո՞վ է՝ հովին մէջ կ'երգէ սէրն աշնան, —
 Խենթ կոյսերու պէս լո՛ւռ կը մերկանան...:

Յիշատակի երգ մ'է աշունն ինձի,
 Հէ՛ք երազներուս վշտակոծ ոգին,
 Որ դաշտերուն մէջ տրտում կը յածի...:

Շարժանկարի նման կեանքս անցաւ անդարձ
 Ու փոխանակ ե՛ս ապրելու գանի
 Քանի՛ յոյսերու ժպտեցաւ հոգիս,
 Եւ իբրեւ թէ դա՛ր մ'ըլլայի ապրած՝
 Որքա՛ն յուշերու բեռն ունիմ ուսիս:
 Լոկ հանդիսատես մընացի անվարձ...:

Յոյսերուս հանգոյն հանգեցաւ շա՛տ վաղ
 Օրն, ու բնանրկարն ալ կը խառնրի
 Իրիկնամուտի ցոլֆերուն նըւաղ...:

Ա. ՍԵՄԱ

Փարիզ